# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի « Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչի թափուր տեղի համար (11 դասաժամ): Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

Հայ եկեղեցու պատմություն առարկայի վերապատրաստման վկայագիր

անձը հաստատող փաստաթուղթ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

ինքնակենսագրություն (Ձև 5)

այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ փետրվարի 22-ից մինչև մարտի-7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 13-ին՝ ժամը 15:00-ին ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Ախուրյան , Գյումրու խճ 16

ըստ հետևյալ ժամանակացույցի:

Տեղեկությունների համար զանգահարել /098181229/ հեռախոսահամարով: